


ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՅԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՓԵՏՐՈՒԿ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԲ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1. Ասուածարանական . —	
Քահանայի Պարսֆ եւ Իրարունֆ .	33
2. Կեանֆ Յիսուսի . Մասն Բ —	
Թշխասութիւն եւ Անուանակոյտքիւն .	53
3. Թղթակցութիւն . —	
Նաւակ Ռումանիայէն .	60
Նաւակ Հնդկաստանէն .	63
Նաւակ Զարայէն .	64
Նաւակ Մաշայեան Թերակղզիէն .	64

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն
սեղի համար սարեկան 4 Շիլինգ կամ 5 Փրանֆ,
վեց անսեայ 2 Շիլինգ կամ 2½ Փրանֆ քրթասարաւ :
Տանկաստանի բաղաւաց մէջ ձեռքէ կը ծախուի
հասը՝ Երկու (2) Դանեկանի :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Բ Տ Ջ Ի

Մրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Թի 12

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1901

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՔԱՀԱՆՍՅԻ ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱԻՈՒՆՔ

1. Խնդրոյս սահմանն. — Քահանայի պարտք եւ իրաւունք ստեղծել չենք ուզեր ակնարկել այն բազմադիմի պարտուց եւ իրաւանց զորս քահանայական աստիճան ունեցող ոմն՝ աշխարհիս վերայ ապրող բոլոր ուրիշ աստիճանի անձանց հետ առաւել կամ նուազ հաւասարութեամբ ունի: Քահանայն աշխարհականաց պէս ունի քաղաքական եւ ազգային որպէս եւ հանրային եւ առանին պարտք եւ իրաւունք. նա ունի իւր սեփական պարտք եւ իրաւունք իբրեւ հայր եւ տէր ընտանեաց, իբրեւ դրացի կամ բարեկամ, իբրեւ քաղաքացի եւ հասարակութեան անդամ: Այս չէ մեր ներկայ յօդուածի նիւթն: Ոչ եւս ակնարկել կուզենք մարդասիրական, կրթական, դրական եւ բարեգործական այնպիսի պարտուց եւ իրաւանց, որոց կըմասնակցին քահանայք ի տեղիս տեղիս, ըստ անձնիւր կարողութեան եւ յարմարութեան:

2. Քահանայական մասնաւոր պարտք եւ իրաւունք. — Ուրեմն քահանայական մասնաւոր պարտք եւ իրաւունք ստեղծել այն պարտաւորութիւններն եւ իրաւասութիւնները կրհասկանամք որ քահանայից եւ միմիայն քահանայից կը պատկանին, որ միմիայն եպիսկոպոսական ձեռնադրու-

թեամբ կըտրուին եւ կ'ընդունուին , եւ անշնջելի եւ անլուծանելի կերպիւ իւրաքանչիւր ձեռնադրուողի անձին հետ կըմիանան եւ կընոյնանան . այո՛ , եւ մինչեւ իսկ , ըստ մեր Եկեղեցւոյ , զկնի մահուան՝ նորա զիակին եւ ոսկերաց կըպարգեւեն մի արտաքոյ կարգի նուիրական յատկութիւն :

3 . Ձեռնադրութեան Մատոցն է ալբիւր գիտութեան , կամ օրինագիրք , պարտուց եւ իրաւանց քահանայի . — Արդարեւ դարերէ ի վեր մեր Եկեղեցին անկերպարան վիճակի մէջ կըգտնուի . ոչ եկեղեցական ժողովներ ունեցած ենք որ մեր Եկեղեցւոյ սահմանադրութիւնն ժամանակի եւ պարագայից զարգացման համեմատ ճշդին եւ յարմարեցնեն , ոչ մի պաշտօնական կանոնագիրք ունիմք ի ձեռին յորմէ կարելի լինի , որպէս կանոնական այլ ամենայն օրէնք նոյնպէս եւ քահանայական պարտուց եւ իրաւանց օրէնք եւ սահմանք , ճշդիւ քաղել եւ հաստատել : Որքան ցաւալի եւ ափսոսելի է այս պակասութիւն , դարձեալ չպիտի մոռանալ որ եկեղեցական իրաց մէջ կենդանի աւանդութիւնն շատ անգամ օրէնքի տեղ կըբռնէ , եւ որքան զարտուղութիւնք տեղի ունենան երկրորդական իրաց եւ սովորութեանց մէջ , էական եւ հիմնական օրէնքներ միշտ հաստատուն կըմնան շնորհիւ հասարակաց պաշտամանց եւ այդ առթիւ գործ ածուած արարողութեանց , աղօթից , ընթերցուածոց եւ երգոց : Երբեմն զժուարին է այսպիսի աղբիւրներէ հաստատել այս ինչ կամ այն ինչ վարդապետութիւն : Սակայն , բարեբախտաբար , քահանայից պարտուց եւ իրաւանց մասին որեւէ միջութիւն կամ զժուարութիւն չկայ : Քահանայից ձեռնադրութեան Մաշտոցն ամենապարզ կերպիւ կըբացատրէ , կըլուսաբանէ օրինակներով , Ս . Գրոց հատուածներով եւ խորհրդաւոր արարողութեամբ՝ ձեռնադրուող քահանայի իւրաքանչիւր պարտք եւ իրաւունք :

Արդ եթէ կարենամք Ձեռնադրութեան Մաշտոցէն անժըխտելի կերպիւ հաստատել քահանայական աստիճանին վերաբերեալ պարտուց եւ իրաւանց ճիշդ սահմանն , յայնժամ այլ եւս պէտք չենք ունենար որ եւ է ուրիշ՝ հին կամ նոր , ազգային կամ օտարազգի , վկայութեան . յայնժամ այլ եւս պէտք չպիտի ունենանք նախնեաց խրթին գրուածներ պրպտելու , ոչ եւս արդեաց ոմանց անհեթեթութիւններ ի նկատի առնելու , որով կըփորձուի այժմ մեր Եկեղեցւոյ սրբազան քահանայութիւնն ոչ թէ միայն իւր

արդի անկեալ վիճակի մէջ պահելու, այլ առաւել եւս ստորնացնելու եւ արհամարհանաց ենթարկելու:

4. Քահանայական աստիճան անջնջելի . — Քահանայական աստիճան անջնջելի է: Մի մարդ կարող է աշխարհիս վերայ մի որ եւ է պաշտօնի կոչուիլ . նախարար, վերակացու, գրագիր, ծառայ եւ այլն լինել, եւ ըստ կամոց իւր մեծին, կարող է պաշտօնանկ լինիլ, իւր նախարարութեան, վերակացութեան կամ ծառայութեան աստիճանը կորուսանել: Քահանայի աստիճան այդպէս չէ: Քահանայութեան կոչողն Աստուած է. եւ ամենէն յառաջ ընծայացուն ինքն պէտք է այդ կոչումն իւր սրտի եւ հոգւոյն մէջ զգայ. երկրորդ՝ ժողովուրդն եւս պէտք է ընծայացուի արտաքին վարքէն եւ նորա ունեցած մտաւոր եւ քարոյական յատկութիւններէն համոզուի թէ այդ կոչումն ստոյգ է եւ աստուածային է. երրորդ՝ ձեռնադրող եպիսկոպոսն եւս իւր կողմանէ պարտիքննել եւ ստուգել այդ կոչման հանգամանքն, եւ ապա ձեռնադրել «ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան»: Արդարեւ եպիսկոպոսի ձեռնադրութեամբ է որ Ս. Հոգւոյն շնորհքն կըտրուի նմա. բայց միանգամ պարզեւեալ շնորհքն չի կարելի որ եւ է իւրք նորէն յետ առնուլ կամ ջնջել, վասն զի պարզեւողն Աստուած է, եւ եպիսկոպոսն Աստուծոյ կամակատարն է, որ պարզեւելու հրաման ունի, բայց յետ առնլոյ հրաման չունի: Այս անխախտ օրէնք ոչ թէ միայն քահանայական աստիճանի անուան եւ մի քանի ծանօթ պաշտօնակատարութեանց կըպատկանի, այլ Ձեռնադրութեան միջոցին հանգիստպէս յանձնուած իւրաքանչիւր պարտուց եւ իրաւանց. այնպէս որ անկարելի է այդ պարտքերէն եւ իրաւունքներէն մէկը կապտել առանց քահանայական աստիճանի անջնջելիութեան դէմ չարաչար մեղանչելու: Հարկաւ մեր խօսքն այստեղ առ ժամանակեայ պատժոց վերայ չէ, որ սակայն կարէ միայն առ ժամանակեայ եւ մինչեւ իսկ երկարամեայ արգելքի կերպարանք ունենալ:

5. Քահանայական Ձեռնադրութիւն բաժանեալ յերկու մասունս, Կոչումն եւ Ձեռնադրութիւն . — Նախ՝ Բնուրթիւն Կոչման, քե ունի՞ իսկապէս ասուածայից կոչումն . —

Քահանայական Ձեռնադրութեան կարգն յերկու առանձին մասունս բաժանեալ է. մին՝ կոչումն, եւ միւսն՝ բուն

ձեռնադրութիւնն : Կոչման կարգն ոչ այլ ինչ է բայց եթէ քննութիւն եպիսկոպոսի կողմանէ՝ ստուգելու համար վերոյիշեալ երեք կէտերն՝ (1) թէ ընծայացուն աստուածային կոչում ունի՝, (2) թէ այդ կոչում ժողովրդեան հաստատութիւն եւ վկայութիւն ունի՝ (վասն զի այդ կոչում որքան ընծայացուն կրպատկանի, գրեթէ նոյնքան եւս ժողովրդեան կրպատկանի, որոց հովիւ լինելու հանդերձեալ է, եւ աստուածային ներշնչումն պէտք է հաւասարապէս ընծայացուն եւ ժողովրդեան ազգէ) . (3) թէ ըստ եպիսկոպոսի կարծեաց ընծայացուն քահանայութեան աստիճանի բոլոր ներքին եւ արտաքին յատկութիւններ ունի՝ ինչպէս իւրեանք կըկարծեն :

Ուստի եպիսկոպոսի առաջին հարցումն է . —

« Եւ գիտէ՞ք թէ կամաւորութեամբ եկեալ է յայս կարգ, եւ յօժար կամօ՞ք յանձն առնու զլուծ տեառն մերոյ Յիսուսի ֆրիստոսի, եթէ ի հարկէ հրաւիրողացն : »

Գոհացուցիչ պատասխան ստանալանէն յետոյ, եպիսկոպոսն կըզգուշացնէ եւ միանգամայն կըքաջալերէ . —

« Այսպէս ասէ Տէրն մեր Յեսուս ֆրիստոս . ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ չայրն իմ երկնաւոր ձգեսցէ զնա առ իս . եւ ամենայն որ գայ առ իս՝ ոչ հանից զնա արտաքս : »

Յորմէ հետեւի թէ քահանայութիւն աստուածային կոչում է (« չայր իմ ձգեսցէ զնա առ իս »), եւ ստանալէն վերջն՝ անձնձեղի է (« ոչ հանից զնա արտաքս ») : Ապա եպիսկոպոսն յառաջ կըտանի իւր քննութիւն եւ ստուգէ թէ այդ կոչման համաձայն ընծայացուն « թողեալ է զամենայն հոգս զբողմանց աշխարհիս, եւ զիւր սովորութեամբ կեալն . » եւ թէ « պահեալ է զանձն իւր սուրբ եւ անարատ ի ծննդենէ մինչեւ ցայսօր : »

6. Երկրորդ քե ունի՞ բարոյական եւ մեաւոր յսկուքիւն այդ սուրբ պաշտօնի համար . — Քննութեան երկրորդ եւ կարեւոր կէտն է « Ունի՞ զուսումն քահանայութեան լիով, եւ զգիտութիւն աստուածային օրինաց : » Կարելի է որ մի մարդ այն աստիճան բարեպաշտական զգացում ունենայ որ կարծէ թէ ինքն քահանայութեան կոչում ունի, եւ ժողովուրդն եւս նոյնպէս արտաքին հանգամանքներէ սխալի եւ քահանայութեան արժանի նկատէ զնա : Բայց առանց իսկապէս ունենալու « զուսումն քահանայութեան լիով եւ զգիտութիւն աստուածային օրինացն », այդպիսի կոչումն իսկական եւ կատարեալ եւ յաստուածակոյս կողմանէ նկա-

տելու իրաւունք չունիմք : Անշուշտ կարող է Ա. տուած աշխարհիս ամենէն տխմար եւ անուս մարդիկը, որպէս երբեմն գալիլեացի ձկնորսներն, հրաշալի զօրութեամբ իմաստնացնել : Բայց մենք իրաւունք չունիմք այսպիսի բացառիկ դէպքեր օրէնքի տեղ դնել, եւ մեր քահանայից ուսումն ու կրթութիւն «կոյր բաղտի» ձեռքը թողուլ : Ինչեւիցէ մեր Եկեղեցին կրպահանջէ քահանայէն «զուսումն քահանայութեան լիով, եւ զգիտութիւն աստուածային օրինաց . » թէպէտ եւ մեր ազգի ունեցած մի քանի կղերանոցաց վարչութիւնք տարբեր կարծիք ունին այս մասին :

Յետ մի քանի ուրիշ հարցմանց ի մասին սրբազան պաշտամանց եւ ժողովրդեան հովուութեան, եպիսկոպոսն կ'առաջարկէ մի կարգ հարցումներ, որոց բարեխղճօրէն պատասխանելը կ'ենթադրէ խորին հմտութիւն նախկին Եկեղեցւոյ ընդհանուր պատմութեան : Ընծայացուն «հրաժարի եւ նզովէ» մինչեւ հինգերորդ դարն երեւցող բոլոր նշանաւոր հերետիկոսներ, որոց մոլար գրութեանց եւ քարոզութեանց պատճառաւ քրիստոնէական Եկեղեցւոյ վարդապետութիւնք զարգացան եւ ճոխացան հետզհետէ : Այդ հերետիկոսաց վարքն ու կեանքն, քարոզութեանց ժամանակն ու գրութիւնն, այդ առիթներով յառաջ եկած վիճաբանութիւնք եւ ժողովներ եւ կանոնադրութիւնք ուսումնասիրելով միայն կարելի է մեր Եկեղեցւոյ վարդապետական զարգացման ընթացքն ըմբռնել, եւ միայն այդ մանրամասնութեանց հմուտ լինելէն վերջ կարող է հայ նուիրեալն եպիսկոպոսի հարցմանց խղճի մտօք պատասխանել . «Հրաժարիմ եւ նզովեմ» :

Այս պատմական եւ վարդապետական քննութեան երկրորդ կարգը՝ զկնի Սրբազան Առաքելոց ընդհանուր Եկեղեցւոյ մէջ փայլող բոլոր նշանաւոր կաթողիկէ (այսինքն, մինչեւ հինգերորդ դարն երեւցող) սուրբ հարց եւ մեր ազգային Եկեղեցւոյ սուրբ հարց կրվեբաբերի, որոց ժամանակի եւ պատմութեան եւ գրաւոր երկոց հմտութիւն կ'ենթադրէ նուիրելոյն պատասխանն թէ՛ «Աշակերտիմ եւ հետեւիմ» : Տիեզերական Երեք Սուրբ ժողովոց եւ ի նոսա մասնակցող հայրապետաց վարուց եւ գործոց տեղեկութիւն եւ հմտութիւն կրխոստովանի : Եւ ի վերջոյ որպէս զի բան մի մոռցուած չմնայ, կըհարցնէ . «Աշակերտի՞ս ամենայն ուղղափառ եւ սուրբ հայրապետացն՝ որք ուղիղ դաւանութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմար-

տուութեան» : Որում կը պատասխանէ ընծայեալ տիրացուն .
 «Աշակերտիմ եւ հետեւիմ» :

7. Ի՞նչ է Քահանայութիւն . — Մեր Մաշտոցի բուն Ձեռնադրութեան կարգն քննութեան անելէ յառաջ, կամ զայն լաւ հասկանալու համար՝ հարկ է երկու խօսքով բացատրել թէ ի՞նչ է քահանայութիւն : — Եկեղեցւոյ նուիրապետութեան առաջին պաշտօնեայք էին Երկոտասան Առաքելքն , որոց յանձնեց Քրիստոս իւր նորահաստատ Եկեղեցւոյ տարածման եւ հովուութեան պաշտօն ասելով՝ «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս . մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ» : Ըստ այսմ՝ Եկեղեցւոյ նուիրապետութեան համայն իրաւունքներն ու իշխանութիւններն եւ գործադրելու զօրութիւններն Երկոտասան առաքելոց յանձնուած էին . այսինքն , այն ամենը որ ընդ պարտայս դարուց զանազան ձիւղերի բաժնուեցաւ , եւ դարերէ ի վեր մասամբ եւ պիսկոպոսաց , մասամբ քահանայից եւ սարկաւազաց եւ ուրիշ բազամաթիւ ստորաբաժանեալ աստիճանաւորաց յանձնուած է , իսկզբան ամբողջովին առաքելոց ձեռքն էր : Իւրաքանչիւր առաքեալ թէ՛ հայրապետ էր թէ՛ եպիսկոպոս , քահանայ , սարկաւազ , եւ այլն . եւ եթէ Եկեղեցին իւր նախնական՝ փոքր ու սահմանափակ դրութեան մէջ մնացած լինէր , ընական է որ նուիրապետութեան աստիճաններ այսքան չէին բազմանար , եւ առաքելական իշխանութիւն ունեցող աստիճանաւոր կամ եպիսկոպոս մի ամեն բանի բաւական կը լինէր , թէ՛ եպիսկոպոսութեան , թէ՛ քահանայութեան եւ թէ՛ սարկաւազութեան պաշտօն կատարելու կը բաւէր : Սակայն Քրիստոսի Եկեղեցւոյ հիմնական դրութիւն , որով իւր գործունէութիւն ամբողջ աշխարհի վերայ ամենայն ազգաց մէջ տարածելու սահմանեալ էր , կը պահանջէր այսպիսի ստորաբաժանումներ : Առաքելական որոշմամբ եղած նախնական եւ գլխաւոր բաժանումներն էին , որպէս եւ են մինչեւ ցայսօր յամենայն ուղղափառ եկեղեցիս , եպիսկոպոսութիւն , քահանայութիւն , սարկաւազութիւն : Վերոյիշեալ տէրունական հրամանէն տեսանք որ Երկոտասանից (եւ հետեւաբար նոցա յաջորդաց) գլխաւոր պաշտօնն էր Քարոզել եւ Մկրտել , եւ այս երկու բառերի մէջ ամփոփուած են Եկեղեցւոյ պաշտօնէի բոլոր սովորական պարտաւորութիւնք : Երբ նուիրապետութիւնը բաժանելու հարկ եղաւ , Եկեղեցւոյ վերին

հսկողութիւնը , այսինքն , քահանայ եւ սարկաւազ ձեռնադրելու պաշտօնն , եւ թէ՛ մի կամ վիճակի ընդհանուր վերակացութիւնն , յանձնուեցաւ եպիսկոպոսին . եւ մի մասնաւոր եկեղեցւոյ կամ ժողովրդեան քարոզելու եւ խորհրդոց մատակարարութեան պաշտօնը քահանայից յատկացուցին . իսկ իւրաքանչիւր եկեղեցւոյ արտաքին պէտքերն , նիւթական մատակարարութիւն , սպասաւորութիւն , աղքատաց խնամարարութիւն եւ այլն , սարկաւազաց յանձնուած էր , որք ըստ ամենայնի իւրաքանչիւր քահանայի հրահանգի համեմատ կրկատարէին իւրեանց պաշտօն : — Եպիսկոպոսական եւ սարկաւազութեան աստիճանաց վերայ խօսելու նպատակ չունիմք այժմ : Մեր ներկայ գիտողութիւնը քահանայական աստիճանին կրկատկանին , որում ինչպէս տեսանք , շնորհեալ էր յառաքելոց անտի քարոզելու եւ խորհրդոց մատակարարութեան պաշտօնն : Հիմա կրմնայ մեղքննել՝ թէ Հայ. Եկեղեցին առաքելական այս կարգադրութիւն պահպանա՞ծ եւ հաստատա՞ծ է , թէ քարոզչութեան պաշտօնը՝ խորհրդոց մատակարարութեան պաշտօնէն բաժանա՞ծ է , եւ քահանայից տարբեր կամ նուազ պարտք եւ իրաւունք չնորհա՞ծ է քան զոր առաքեալք շնորհեցին :

8. Բուն Կարգ Քահանայական Ձեռնադրութեան . — Մեր դիտաւորութիւնը չէ այստեղ մեր Մաշտոցի քահանայական ձեռնադրութեան ամբողջ Կարգը քննել մանրամասնօրէն . այլ այդ կարգէն քաղել այն վկայութիւններն որ ըստ մեր կարծեաց յօդուածիս առարկային լուսաբանելու եւ բացատրելու կրճատային , այսինքն , քահանայից պարտուց եւ իրաւանց օրէնք ու սահմանք յանդիման ածեն :

Առաքելական դարու ձեռնադրութեան առաջին օրինակն կրկանեմք ի Գործս Առաքելոց (ԺԳ. 3) , ուր պատմուած է թէ ըստ որոշման Հոգւոյն Սրբոյ՝ Առաքեալք «պահեալ եւ ազօթս արարեալ եղին զձեռս ի վերայ նոցա (Բառնարայ եւ Սաւղոսի) եւ արձակեցին :» Նոյնպէս կրկարդամք առ Տիմոթէոս ուղղեալ Ա. Թղթոյն մէջ . «Մի՛ անփոյթ առնիր զշնորհացդ որ ի քեզ են , որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան :» Եւ զարձեալ (Ա. Տխն. Ե 22) երբ Ս. Պաւղոս՝ երիտասարդ եպիսկոպոսին Տիմոթեայ կրկատուիրէ . «Ձձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես :» Սոյնպիսի օրինակաց եւ պատուիրանաց համեմատ , բայց առաւելապէս կենդանի աւանդութեան շնորհիւ , որով սերունդէ սերունդ առաքելակա՛ն

յաջորդութեան շնորհն անաղարտ մեր ձեռքն հասած է , Հայ. Եկեղեցին իւր Ձեռնադրութեան կարգն յօրինած է : Ձեռնադրութեան էական կէտերն են (1) դիտում կամ որոշում («որոշեցէք ինձ զհառնաբաս եւ զՍաւղոս ի գործ յոր կոչեցեալ է իմ զդոսա»), (2) աղօթք ըստ վերոյիշեալ դիտման , (3) եւ առաքելական ձեռնադրութիւն (այսինքն , առաքելական կառարեալ յաջորդութիւն ունեցող անձին , որ է՝ եպիսկոպոս ի կողմանէ) : Ձեռնադրութեան կարգի միւս մասերն (թէ եւ կանոնապէս անհրաժեշտ) առաքելական (այսինքն քահանայութեան) շնորհն հաղորդելու համար էական կէտեր չեն . նոքա այդ նուիրական գործողութեան՝ հանդիսաւորութիւն եւ ազդուութիւն ընծայելու կրճատայեն , եւ մեր ներկայ խնդրոյն լուսաբանութեան ոչ սակաւ կընպաստեն իբրեւ երկրորդական փաստեր :

9 . Դիտում կամ Որոշում Ձեռնադրութեան . — Ձեռնադրութեան դիտումն քահանայացուի եւ նորա ընտրող ժողովրդեան կողմանէ ըստ մեծի մասին յայտնի է օր յառաջ կատարուած կոչման կարգէն , ուր ակնյայտնի կ'երեւի որ ընծայեալ եւ ժողովուրդ կրփափազին որ այս ինչ անձն քահանայ կոչուի : Բայց Սուրբ Կարգի վաւերութեան համար անհրաժեշտ է որ ձեռնադրող եպիսկոպոսն ինքն եւս կատարելապէս համոզուած լինի ձեռնադրուողի արժանաւորութեան մասին , եւ այդ մտքով եւ դիտմամբ նորա վերայ ձեռք դնէ : Նախընթաց ակուր կոչման քննութեան շնորհիւ համոզուած լինելով նորա արժանաւորութեան մասին , եպիսկոպոսն ձեռնադրութեան առաւօտուն իւր պաշտօնական զգեստն հագած եւ հովուական աթոռոյն վերայ բազմած՝ նորէն կըհարցնէ .

« Եւ զիտէ՞ք զի արժանաւոր է , թէ ո՞րպէս կամ զիտ՞րդ ունի քաղաքավարութիւն , եւ թէ ո՞րքան ունի իմաստութիւն և սքսութիւն : »

Որում պատասխանէ Աւագերէցն ի դիմաց ժողովրդեան նկատմամբ ընծայելոյն .

« Այնչափ՝ որքան մտրդկային տկարութիւնս մեր տայ մեզ ճանաչել՝ զիտեմք և վկայեմք սմա արժանաւոր գոլ առ ի բառնալ զլուծ աստիճանաց , ասելու սքսութիւն և իմաստութիւն : »

Ուշադրութեան արժանի է աստ դարձեալ արժանաւորութեան պայմաններն՝ Սրբութիւն եւ Իւնաստութիւն : Նոյնպէս նկատելի է որ երբ նուիրեալն (այսինքն , քահանայա-

ցուն) կրտանին եպիսկոպոսի մօտ, «եպիսկոպոսն տեառնազքէ ի վերայ նուիրելոյն եւ ասէ. «Ընկալցի զիգ Տեր» : Այսինքն, Աստուած է կոչողն, Աստուած է որ զնա կ'ընդունի ի կարգ քահանայութեան : Եպիսկոպոսն միայն գործիք մի է ի ձեռն Աստուծոյ. Նորա կամակատարն է, որ պարգեւելու հրաման ունի, ըսյց յետ առնելու կամ ջնջելու. հրաման չունի : (*) Սոյն միտքը նորէն կը շեշտուի սարկաւազի քարոզովն որ անմիջապէս կը յաջորդէ .

«Աղաչեցուք զմարդասէրն Աստուած վասն (այս անուն) սարկաւազի որ հանդերձեալ է կոչիլ է քահանայութիւն, զի արժանի լիցի ի ձեռն կոչմանս այսորիկ զբուրեանս եւ շնորհաց ձեռնադրութեանս՝ արնալ զշարհն՝ Կահանայութեան յամենայնիւ Արարչոյ. կեցուցէ եւ ողորմեցի : »

Սարկաւազի այս հրաւիրանաց համեմատ շրջապատող քահանայք իւրեանց ձեռքերը նուիրելոյն ուսոց վերայ կը դրնեն. մինչ եպիսկոպոսն նոյնպէս «դնէ զաջն ի վերայ գլխոյն ըւիրելոյն» եւ նախապատրաստական աղօթքը կը կարդայ, յորում մասնաւորապէս կ'աղօթէ.

«Տուր շնորհս ծառայիս այսմիկ արնալ զարիճան Կահանայութեան յամենայնիւ Արարչոյ ի ձեռն կոչմանս եւ ձեռնադրութեանս, արժանաւոր լինել ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ, առնուլ զպարգևս վերակացութեան արժանաւորութեամբ : »

Ձկնի Սաղաղութեան դարձեալ կը կրկնէ .

«Աղաչեմ զքեզ, Հայր երկնաւոր, առաքեա՛ զշողի սուրբ եւ օրհնեա՛ զնորնծայս զայս որ կոյ առաջի սրբոյ սեղանոյ քոյ, առնուլ զաստիճան քահանայութեան, եւ լինել տեսուչ ժողովրդեան քոյ եւ աթոռակից առաքելոցն : »

Այս բոլոր նախապատրաստական արարողութիւնք, քարոզ, աղօթք եւ օրհնութիւն ամենապարզ կերպիւ կը հաստատեն ինչ որ ի սկզբան ճառիս (թիւ 4) ասացաւ ի մասին անջնջելութեան քահանայական աստիճանի, եւ ինչ որ կոչման միջոցին քահանայացուի արժանաւորութեան մասին պահանջուեցաւ եւ ենթադրուեցաւ :

10. **Ձեռնադրութեան Գլխաւոր Աղօթքն.** — **Ձեռնադրութեան բուն գործողութիւնը կը սկսի, երբ եպիսկոպոսն «դնէ զձեռնսն խաչանման ի վերայ գլխոյ նուիրելոյն եւ ասէ .**

(*) Մայր մաշտոցի մէջ հետեւեալ խրատը կայ, որ լիովին կը հաստատէ մեր վերոյիշեալ մեկնութիւնն : — «Եւ եպիսկոպոսն դնէ զայն ի վերայ գլխոյ նուիրելոյն (որ ջուրցանէ թէ՛ սուղն իշխանութեանց եւ շնորհաց՝ Հոգիւն Սուրբէ. եւ եպիսկոպոսն սպասաւոր է եւ միջնորդ. որպիս խողովակն յաղբեհկն զբուր առեալ ի ինչ անցողցանէ : » — Մայր Մաշտոց (Կ. Պօլիս, 1807) էջ 264 :

Մարմնայն եւ Աբիան Տեառն յերայ և Փրկչին Յիսուսի Գրիստոսի ի թողութիւն մեղաց արժանապէս Հաղորդելոցն :

Ծ. Այլ եւ զամենայն իսկ զկարգոս քահանայաւթեան Բաւանդաւ տառիւնն ընթացի ի տարբերով՝ եղիցի փառաւորիչ սուրբ Երրորդութեանդ, և վարձս ընդ երանելի առաքեալսն ընկալցի ի կեանսն յաւիտենականս՝ կրկին պատուոյ արժանաւոր լինելով :

Կարող ենք ասել որ այս աղօթք Ձեռնադրութեան ամենէն էական աղօթքն է, յորում եպիսկոպոսն կըթուէ ամենաբացորոշ կերպիւ քահանայական գլխաւոր պարտքեր եւ իրաւունքներ, որք ձեռնադրութեան միջոցաւ կըտրուին ընծայեցելոցն : Այս աղօթքն քահանայի պաշտօնավարութեան հրովարտակն է. եւ պէտք է անպատճառ ընդունիմք երկուքէն մին, կա՛մ սոյն աղօթքի միջնորդութեամբ իւրաքանչիւր քահանայի յանձնուած պարտք եւ իրաւունք իրական շնորհներ են զորս պէտք է ամեն բարեխիղճ քահանայ մշակէ եւ արգիւնաւորէ ցորչափ կենդանի է, կա՛մ քահանայի ձեռնադրութեան ամբողջ կարգն խաղ մի է, կատակերգութիւն մի է : Եպիսկոպոսն իւր ձեռք նորընծայի վերայ զնելով՝ կ'աղօթէ նախ որ աստուածային շնորհն առաջնորդէ եւ զօրայնէ զընծայեալն, որպէս զի « կացոյէ հաստատուն եւ անարատ ՚ի գործս քահանայութեան » : Յետոյ կըսկսի թուել քահանայութեան գործերն : —

11. Առաջին (Ա) եւ ամենակարեւոր պատճօն քահանայի՝ Քարոզութիւն. — Ամենէն յառաջ եւ ամենէն կարեւորը կը համարի Քարոզութիւնն. « Եղիցի սա մշակ առանց արեօրոյ, ո ղիղ հարեւոսեղ զբանն ճշնարտութեան, սերմանել զկեանքանարար եւ զուղղափառ հաւատս առաքելական Եկեղեցւոյ յամենայն լսողս » : Ոչ ոք կարէ տարակուսել այս առաջին պարտուց նշանակութեան մասին : Այդ խօսքեր առնուած են բառ առ բառ Ս. Պաւղոսի առ Տիմոթէոս (Բ Տիմ. Բ 15) ուղղեալ թուղթէն, յորում Սրբազան Առաքեալ կըխրատէ երիտասարդ Տիմոթէոս եպիսկոպոսին՝ «մի բանակուիւ լինել յոչինչ պէտս», այլ իւր բոլոր ոյժն նուիրէ Ս. Աւետարանի քարոզութեան, որոյ համար ձեռնադրուած էր : Ուստի մեր Եկեղեցին Տիմոթէոսին ուղղեալ այս խօսքերոյն զքահանայս պաշտօնի կոչելով՝ կ'ուզէ մեզ հասկացնել որ, մեր քահանայական պաշտօնի առաջին եւ ամենակարեւոր պարտքն է քարոզել զքանն ճշմարտութեան : Ասել է որ ամեն քահանայ նոյնքան պարտաւոր է քարոզել, նոյնքան իրաւունք ունի քարոզելու. «զուղղափառ հաւատս առաքելական Եկե-

ղեցւոյ յամենայն լսող», որքան Տիմոթէոս ունէր կամ որքան որեւէ մի ուրիշ ժամանակակից եպիսկոպոս կամ արտօնեալ քարոզիչ Աւետարանին կարէ ունենալ: Քահանայութիւնը ոչինչ է եթէ Աւետարանի քարոզութիւնն իւր լրութեամբն եւ ամբողջութեամբ այդ աստիճանի էական եւ առաջնակարգ տարրը չէ. գօսացեալ եւ անկենդան է այն կրօնական հաստատութիւն, Քրիստոսի նկատեալ հիմնարկութենէն օտար է այն Եկեղեցին, որոյ քահանայք չեն քարոզեր անդադար եւ չեն հետեւիր իւրեանց երկնաւոր Վարդապետին, որ երեք տարի անընդհատ քարոզեց, եւ ոչ մի պատուիրան այնքան ստիպողաբար աւանդեց իւր Եկեղեցւոյ հովուաց, որքան քարոզութեան պատուէրն:

12. Երկրորդ (Բ) պատճօն քահանայի՝ Բժեկուքիւն յանուն Յիսուսի: — Քահանայական երկրորդ շնորհն է յանուն Յիսուսի բժշկել զախտաժէտս, ըստ օրինակի Տեառն մերոյ եւ սրբազան առաքելոց: Որովհետեւ այս շնորհաց արդիւնաւոր գործածութիւնը կախուած է քահանայի որպէս եւ հիւանդի անձնական հաւատքէն, դժուարին է սահման ու կանոն գնել, կամ ստուգել թէ ի՞նչ աստիճան յաջողութեամբ ի գործ կը դնէ իւրաքանչիւր ոք իւր ունեցած արտակարգ զօրութիւն. ինչպէս նաեւ դժուար է ամեն պարագային ստուգել կամ տեսնել արդիւնքն նորա քարոզութեանց: Քահանայի պարտքն է իւր ունեցած իշխանութիւնը գործածել ինչպէս քարոզութեան նկատմամբ, նոյնպէս եւ բժշկութեան նկատմամբ. իսկ արդիւնքն կամ յաջողութիւնն երկուքի մէջ եւս թողնելու է ի ձեռս Աստուծոյ:

13. Երրորդ (Գ) պատճօն՝ Կատարումն Մկրտութեան խորհրդոյ: — Չեանդրութեան Ազօթքի միջոցաւ քահանային մասնաւորապէս շնորհեալ երրորդ պաշտօնն է՝ Մկրտութեան փրկարար խորհուրդը կատարել: Արդարեւ գիտենք ի Գործոց Առաքելոց որ Սուրբ Փիլիպպոս՝ մին եօթն սարկաւագաց, որ ոչ առաքելութեան եւ ոչ երէցութեան (քահանայութեան) աստիճան ունէր, Սամարիոյ մէջ շատեր մկրտեց. այլ սակայն դրոշմելու կամ Սուրբ Հոգւոյն շնորհն պարգեւելու իրաւունք չունէր, եւ այս պատճառաւ հրաւիրեց կոչեց Երուսաղեմէն զՅովհաննէս եւ զՊետրոս առաքեալներն, «որք եկեալ՝ եղին զձեռս ի վերայ նոցա (այսինքն, նորոգ մկրտելոցն), եւ առնուին Հոգի Սուրբ»: Նոյնպէս չենք անգիտանար որ Ս. Մկրտութեան խորհուրդն կարելի է վաւերաբար մատակարարել որ եւ է ուրիշ աշխար-

հական անձին (եւ մինչեւ իսկ ի հարկին՝ կանանց) ձեռամբ : Նոյնը կարելի է ասել Բժշկութեան պաշտօնի մասին : Բայց Եկեղեցւոյ բարեկարգութեան համար , եւ մանաւանդ որ ներկայ սովորութեան համեմատ Ս. Մկրտութեան հետ սերտիւ կապուած է քահանայական աստիճանին միայն յատուկ Դրոշմի սուրբ խորհուրդն , ինչպէս Բժշկութեան նոյնպէս եւ Մկրտութեան պաշտօնը մասնաւորապէս քահանայից յատկացեալ է , եւ այլոց ամենեցուն (ի բաց առեալ ստիւ պողական պարագայից՝ ի դէպս վտանգի մահուան) խստիւ արգելեալ է , եւ յանցաւորն կանոնական պատժոց կարէ ենթարկուիլ :

14 . Չորրորդ (Դ) պատճառ՝ Ս. Պատարագ մատուցանել : — Քրիստոնէական Եկեղեցւոյ ամենէն նուիրական հասարակաց աղօթքն է՝ Քրիստոսի սուրբ Մարմնոյ եւ Արեան փրկարար խորհրդոյ մատակարարութիւնն , որոյ հետ նաեւ միացած է կերպիւ իւրիք ժողովրդեան խոստովանութիւնը լսելու , եւ արձակելու պաշտօնն : Այս սուրբ պաշտօն այնքան կարեւոր է որ մասնաւոր եւ զգուշաւոր ուսումնասիրութեան արժանի է : Մեր ներկայ խնդրոյ լուսաբանութեան համար լիովին կըբաւէ ասել , որ Ս. Պատարագն միմիայն քահանայական աստիճան ունեցող անձանց վերապահեալ է , եւ որ եւ է իւրիք աշխարհական ո՞նկ կամ եկեղեցական ստորին աստիճաններ ունեցող անձինք չեն կարող վաւերաբար կատարել այդ սուրբ խորհուրդն :

15 . Հինգերորդ (Ե)՝ այլ ամենայն կարգի քահանայութեան : — Երկու գլխաւոր եւ փրկարար խորհուրդներն մասնաւոր կերպով յիշելէն յետոյ , Եկեղեցւոյ մնացեալ խորհուրդներն եւ քահանայական պարտաւորութիւններն ի մի ամփոփելով՝ կըկոչէ «այլ ամենայն կարգս քահանայութեան » : Եկեղեցական պաշտամանց վերաբերեալ մի շարք ընթերցուածներ եւ արարողութիւններ կան որք Եկեղեցւոյ բարեկարգութեան համար քահանայից վերապահեալ են : Թէպէտ որ եւ է մի աշխարհական կարող է առտնին կամ իբրեւ աղօթատեղի չօժուած սենեակի կամ սրահի մէջ յիշեալ աղօթքներ եւ մաղթանքներ գործ ածել , կամ ի ստիպել հարկին , երբ քահանայ չգտնուի , նոյն իսկ օժուած եկեղեցւոյ մէջ , սակայն եւ այնպէս քահանայական աստիճան չունեցող անձանց՝ կանոնալարն օրհնելով արգելեալ է հասարակաց պաշտամանց այն արարողութեանց ձեռնամուխ լինել . եւ այն աղօթքներ եւ ընթերցուածներ կարգաւ , որք

քահանայից յատկացեալ են : Այս կարգէն են գլխաւոր աղօթքներն ու մաղթանքներ , Ս. Աւետարանը կարդալ , օրհնութիւն տալ , վերաբերում կատարել եւ այլն , որոց մանրամասնութիւնք եկեղեցական մատեաններէ (Ժամաագիրք , Տօնացոյց , Մաշտոց եւ այլն .) եւ կանոնական օրէնքներէ ստուգելու է , եւ մասամբ Ձեռնադրութեան յետագայ արարողութեանց մէջ յիշուած են : Բայց մեր ներկայ գրութեան նպատակին լիովին կրճատայէ վերոյիշեալ հինգ կարեւորագոյն մասանց յիշատակութիւնն :

Իսկական ձեռնադրութիւնն այս աղօթքովը կրկատարուի , եւ յետագայ ընթերցուածք , աղօթք , խորհրդաւոր արարողութիւնք , որպէս զգեստաւորումն եւ օծումն , սոյն այս հիմնական աղօթից ընդլայնումն եւ շեշտումն են :

16. Քահանայական Ուրարի , որ է Փորուրարի յանձնումն : — Այս պահուն եպիսկոպոսն նորընծայի ձախ ուսէն կախուած սարկաւազութեան ուրարի ետեւի ծայրը բռնելով դէպ ի աջ ուսը կրբերէ լծանման , միանգամայն արտասանելով . «Առ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . զի լուծ նորա քաղցր է , եւ բռն նորա փոքրոզի :» Ուրարն Քրիստոսի լուծն է , զոր սարկաւազն կիսով չափ (միայն ձախ ուսին վերայ) կրելու կոչուած է , իսկ քահանայն՝ ամբողջովին , կատարեալ գիտակցութեամբ եւ անթերի պատասխանատուութեամբ իւր վերայ կ'առնու . Քրիստոսի փոխանորդութեան ահաւոր պաշտօնը պիտի կատարէ առջի մարդկան , ուղղակի ի Սուրբ Հոգւոյն կ'առնու Աւետարանի քարոզութեան եւ սուրբ խորհրդոց մատակարարութեան լիազօր իշխանութիւն : Քահանայն իւր բարւոք կամ յոռի պաշտօնավարութեան համար ուղղակի Աստուծոյ պատասխանատու է : «Յայսմ հետէ պատիւ քո եւ պատիժ ոչ լիցի ըստ աշխարհականաց , այլ ըստ հրեշտակաց կացելոց եւ անկելոց : Զի թէ արժանաւոր կարգիդ լինիս , ընդ հրեշտակս է դասակարգութիւն քո , իսկ եթէ անկանիս , ընդ անկեալ դեւսն է պատիժ քո եւ ոչ ընդ այլ մեղաւորսն : Վասն որոյ ասէ մարգարէն , ի գործս մարդկան չեն նօքա , եւ ըստ մարդկան ոչ տանջեսցին : Եւ ոչ թէ այսչափ միայն , այլ ի վեր քան զհրեշտակս իշխանութիւն ունի քահանայն . զի աստուածագործ լինի՝ զգործ Քրիստոսի կատարելով եւն :» (*)

(*) Կանոնադրութիւն եպիսկոպոսին ի վերայ նուիրելոյն ի քահանայութիւն . — Մայր Մաշոց , էջ 254 :

Այս խորհրդաւոր լծադրութեան կրօնընդունելու անձք յեղեկիւնէլէ, ի Մաղաքեայ, յեսայեայ մարգարէից, եւ ի Պետրոսի առաջին կաթողիկոսեայ, եւ առ Տիմոթէոս ուղղեալ թղթոցն, եւ մէկ հատուած ի Ս. Աւետարանէն Ղուկայ: Այս բոլոր ընթերցուածներ լծադրութեան կամ ուրարի նուիրման խորհուրդը կը մեկնեն, եւ անստերիւր ապացոյց կը նծայեն թէ ըստ մտաց Հայ. Եկեղեցւոյ՝ քահանայի գլխաւոր պաշտօնն է՝ ուսուցանել, քարոզել եւ Աստուծոյ պատգամն յայտնել մարդկան: Եղեկիւնէլ Մարգարէէն կը կարգան.

«Այսպէս առ Տէր. որդի մարդոյ, դէս կացուցի զքեզ տանդ իսրայէլի. լուիցես յինէն զպատգամս, և սպասնայցես նոցա իբրեւ յինէն. եւ այլն:»

Մաղաքեայ մարգարէէն առնուած են այս գեղեցիկ եւ քահանայի պարտաւորութիւններն յերեւան բերող խօսքերն.

«Թրէնք ճշմարտութեան էին ի բերան նորա, և անխառնութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութեամբ և ուղղութեամբ գնաց ընդ ի. և զբազումս դարձոյց յանիրաւութեան: Զի շրթունք քահանային զգուշացին գիտութեան, և օրէնս խնդրեացն ի բերանոյ նորա, զի Տրեշտակ Տեառն ամենակալի է:»

Եսայեայ մարգարէէն առնուած է այն հուշակաւոր հատուածն զոր Տէրն մեր Նազարէթ քաղաքի ժողովրդանոցի մէջ կարգաց, երբ Եսայեայ մարգարէութեան մատենանը ներկայացուցին, ինչպէս ամենէն վերջը կարգացուած Աւետարանի հատուածն եւս նոյն դէպքը կը նկարագրէ.

«Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զես. և ավետարանել աղքատաց առաքեաց զիս. քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսնել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի, և զօր հատուցման:»

Առաքելական թողութիւնն առնուած կտորներ նոյնպէս քահանայութեան եւ ընդհանրապէս հովուական պաշտօնի վերաբերեալ խրատներ կը պարունակեն: Ապա ուրեմն այս լծադրութեան արարողութիւնն եւ վերոյիշեալ բոլոր ընթերցուածներ կը կին անգամ կը հաստատեն քահանայի քարոզութեան պաշտօն, ինչ որ արդէն անժխտելի կերպիւ աւանդուած էր նախապէս ձեռնադրութեան բուն աղօթքի միջոցին:

17. Հաստատութեան Աղօթք. — Զանց առնելով ձեռնադրութեան միւս արարողութիւններ որ այդ առթիւ մտ-

տուցուած Ս. Պատարագի հետ առաւել կամ նուազ կապակցուած իւր ունին . նոյնպէս Աստուած Անձ քարոզն եւ յաջորդ Տէր Աստուած զօրութեանց աղօթքն , որք մինչեւ ցայս վայր կատարուած աղօթից միտքը նորէն ի վեր կրբերեն . վերջին՝ Յիսուս Քրիստոս , հայեաց ի ծառայս ին աղօթքէն եւս պէտք է մի փոքրիկ հատուած յառաջ բերենք : Քահանայական փիլոնը նորընծայի վերայ կրճգեն , եւ սպասաւորող սարկաւազն քահանայական զգեստները ձեռքն առած եւ պիսկոպոսի առջեւ՝ աւերնթեր նորընծային կրկանգնի , մինչ եպիսկոպոսն կրկայրդայ աղօթքն : Այս աղօթքի գլխաւոր միտքն է՝ հայցել Աստուծոյ օրհնութիւնն ի վերայ նորընծային , որպէս զի հաստատուին յանձին նորա այն գերբնական զօրութիւններ զոր ընկալաւ ձեռնարկութեան շնորհիւ : Մասնաւորապէս կրխնդրէ եպիսկոպոսն որ այն նուիրական եւ խորհրդաւոր զգեստները զոր նա պիտի զգենու մի քիչ վերջ եւ յետայնու իւր պաշտօնաւարութեան միջոցին՝ ներշնչեն ի նա այն բարոյական եւ հոգեւոր բարեմասնութիւնք որոց խորհրդաւոր նշանակիչք են դոքա : —

« Զգեցո՛ւ սմա պատմուճան ուրախութեան և հանդերձ փառաց . վառեա զմէջ սորա ամենայն ժուժկալութեամբ . ցոյց զսա ճգնաւոր և գործունեայ գործոց բարեաց . պարկեշտ , աղօթասէր , ամբիծ , ցածուն . հեղ , խոնարհ , սուրբ սրտիւ և անարատ պահել զքահանայութիւնն : »

Աղօթքի երկրորդ մասին մէջ քահանայական զգեստուց նմանութիւն կրբերէ « զպատմուճան եւ զարտախուրակն Ահարոնի եւ որդւոց նորա , զծաղկեայ պատմուճանն Յովսեփայ , » եւ « զմաշկեակն Եղիայի , յորոյ ձեռն հանգեաւ հոգին Եղիայի ի վերայ Եղիսէի » . նոր Ուխտի քահանայական զգեստները կընկատէ իբրեւ կատարուին Եսայեայ մարգարէութեան՝ թէ . « Ո՞վ է սա՛ որ զիմնալ զայ յեղովմայ , գեղեցիկ պատմուճանաւ եւ բուռն զօրութեամբ : » Եւ ապա կըյաւելու հետեւեալ նշանակալից խօսքեր .

« Ենորհեա՛ և կոչեցելոյս այժմ՝ առ ի քէն ի գործ վերակացութեան տնտեսութեան խորհրդոյ Եկեղեցւոյ սպասաւորել , խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ . հետեւել արագաթափչ ընթացիւք մտաց ընդ անհուն սուպարեզ քոյինաշունչ կտակարանաց : Եւ ի մտաշել սորա ի գլուխ հանդիսի մեկնութեան բանից աստուածայնոց , նախաժամանեացէ առ սա գթութիւն քո , խօսելով ի սա զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո ի ժամանակի , ի փառս և ի գովեստ աստուածութեանդ քո , և ի լրութիւն շինութեան կա-

Թուղիկե Եկեղեցւոյ: Կարկառեա՛ ի վերայ սորա զամենա-
մերձ աջ քո, և զօրացո՛ զսա շնորհօք դժուրեան քոյ:
Փարատեա ի մտաց սորա զմէզ թմրութեան մոռացութեան,
ապաքինեալ ընդ նմին և իմաստից ի կեցողոյս երկրէ ի
բարձունս: Լուսաւորեա՛ ի սմա վերստին զծագումն ան-
ստուեր հրաշից գիտութեան աստուածութեան քո հօր ,
արժանի լինել՝ առնել և ուսուցանել՝ յօրինակ բարեաց
աստուածասէր լսողաց: »

Այս գեղեցիկ աղօթք տարակուսանաց ամեն նշոյլ կը-
փարատէ, եթէ նոյն իսկ առանց այսր կարելի լինէր տա-
րակուսանաց որ եւ է նշոյլ մի երեւակայել անկողմնակալ
ընթերցողի մտաց մէջ, ի մասին քահանայի առաջին եւ
գլխաւոր պարտուց: Եթէ յառաջագոյն կատարուած բոլոր
արարողութիւններէն եւ աղօթքներէն տակաւին լիովին
չհասկացանք, աստ անայլալակ եւ ո եւ է երկդիմութեանէ
ազատ խօսքերով կրճաստատէ թէ նորընծայն կոչուած է
այլ եւս « ի գործ վերակացութեան խորհրդոյ Եկեղեցւոյ. » եւ
այդ վերակացութեան պաշտօնը պիտի կատարէ յետայսու
« խօսելով հասարձակութեան զկենդանաւոր խորհուրդ աւե-
սեաց աւեսարանին . հետեւել արագարոյն ընթացիւ մեաց ընդ
աննուն ապարեզս փոյնաշունչ կտակարանաց: Եւ ի մասէն
սորա ի գրուի հանդիսի մեկնութեան բանից աստուածայնոց,
նախաժառանգեցի եւ այլն » . Հոգ չէ թէ ներկայ սովորու-
թիւնն ի՛նչ է . մեր ստանձնեալ պաշտօնն էր ցոյց տալ
պաշտօնական աղբիւրներէ թէ ի՛նչպիսի իրական աստուա-
ծային շնորհներ կը տրուին հայ քահանային: Չե՞նազորու-
թեան ամբողջ կարգն, եւ գրեթէ պէտք եղածէն աւելի այս
աղօթքն, ցոյց կը տայ որ քահանայի իրական պաշտօնն է
գերազանցապէս՝ Քարողութիւն Բանին: Հայ քահանայն
պարտի այդ իրաւունքն դորձածել ոչ թէ միայն պատա-
հաբար եւ այս ինչ կամ այն ինչ պայմանի ներքոյ, այլ
պարտի անդադար եւ անպայման (եւ առաւել քան թէ իւր
քահանայական միւս գործեր) « խօսել համարձակութեամբ
զկենդանաւոր խորհուրդ աւետեաց աւետարանին », այ-
սինքն, քարոզել՝ աստուածաբանական եւ վարդապետա-
կան լիովին մեկնութեամբ, « հետեւել արգաթիւն ընթա-
ցիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյնաշունչ կտակա-
րանաց »: Ի մի բան քահանայի գլխաւոր եւ էական պաշ-
տօնն է Ս. Աւետարանի քարողութիւնն իւր ամբողջու-
թեամբն եւ կատարելութեամբն . կուզէք « խրատական ծա-
նուցում » կոչեցէք, կուզէք բեմասացութիւն եւ ատենա-
բանութիւն անուանեցէք . կուզէք գալիլեացի ձկնորսաց

գեղջուկ ու անյարդար ոճովը խօսեցէք, կուզէք Դեմոսթենէսի ճարտարաբանութեամբ ճառեցէք. ամեն հայ քահանայի յանձնուած է յԱստուծոյ՝ Ս. Աւետարանը եւ Ս. Աւետարանի ազատ եւ լիազօր քարոզութեան պաշտօն եւ իրաւունք զոր, «ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք . . . եւ ոչ այլ ինչ արարած» կարէ մեր ձեռքէն խլել կամ մեր անձէն բաժանել:

18. Զեռնադուրեան Կարգի վերջին արարողութիւնք. — Ինչպէս տեսանք ի վերոյ, քահանայագործութեան լիազօր եւ կատարեալ իշխանութիւն տրուեցաւ ձեռնադրութեամբ եւ (թիւ 10) գլխաւոր աղօթքով: Այս վերջին խորհրդաւոր արարողութիւններն սուրբ աստիճանի հանդիսաւորութեան եւ ազդուութեան համար կը յաւելու Եկեղեցին: Որքան որ ժողովրդական ըմբռնումն այս զգալի եւ շօշափելի գործողութեանց (զգեստաւորման եւ օժման) մէջ կը տեսնէ քահանայական աստիճանի իսկական շնորհումն, այնու հանդերձ գիտնալու է որ առանց զգեստաւորման եւ օժման՝ քահանայութեան շնորհն արդէն լիովին տրուած է, եւ այս յաւելում (որքան որ անհրաժեշտ է, եւ նորա զանցառութիւնն կանոնական ծանր յանցանք կը համարուի) համեմատաբար երկրորդական կարեւորութիւն ունի: Այդ զգալի նշաններով եպիսկոպոսն կը հաստատէ եւ կը կրկնէ արդէն ձեռնադրութեամբ շնորհեալ արտօնութիւններն: Քահանայական զգեստը կը հագցնէ որով պիտի Ս. Պատարագ մատուցանէ եւ այլ սրբազան խորհուրդներ կատարէ, իւրաքանչիւր զգեստի խորհրդաւոր նշանակութիւնն յայտարարելով: Առ քեզ սաղաւարտ ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» . մի անգամ եւս շեշտելով որ թէպէտ եպիսկոպոսն կը պաշտօնավարէ, բայց աստիճան տուողն, ինչպէս աստ սաղաւարտ պարգեւողն, Տէր Յիսուս Քրիստոս է: Նոյնպէս շուրջառն նորընծայի վերայ ձգելով՝ կ'ասէ. «Տէր մեր Յիսուս Քրիստոս զգեցուցանէ քեզ հանդերձ փրկութեան եւ այլն»: Գօտին կապելու միջոցին կ'ասէ. «Առ քեզ իշխանութիւն ի Հոգւոյն Սրբոյ՝ կապելոյ եւ արձակելոյ եւ այլն»:

Հուսկ յետոյ իբրեւ վերջնական հաստատութիւն եւ կնիք այս ամենայն նուիրական եւ խորհրդաւոր արարողութեանց եւ գերբնական զօրութեանց եւ շնորհաց, եպիսկոպոսն կ'օժէ սուրբ Միւռոնով նորընծայի ձակատն եւ ձեռներն, ըստ նմանութեան Ահարոնեան քահանայից Հին Ուխտին:

19. Վերջաբան. — Ճառիս անխուսափելի երկարութիւնը կը պահանջէ որ ի վերջոյ համառօտիւ ամփոփենք այն գլխաւոր կէտեր զոր աշխատեցանք հաստատել :

Նախ՝ Քահանայական պարտուց եւ իրաւանց օրինազիրքը Ձեռնադրութեան Մաշտոցն համարելով՝ Ձեռնադրութեան բուն աղօթքի մէջ յիշուած հինգ կէտերը կը կազմեն իւրաքանչիւր ձեռնադրուողի պարտուց եւ իրաւանց բովանդակութիւնն :

Երկրորդ՝ Քրիստոնեայ քահանայք Սրբազան Առաքելոց օրինաւոր յաջորդներ են ի մասին Աւետարանի քարոզութեան եւ այլ ամենայն խորհրդոց մատակարարութեան, ի բաց առեալ Եկեղեցւոյ վերին հսկողութիւն (որ եպիսկոպոսաց վերապահեալ է) :

Երրորդ՝ Ամբողջ Նոր Կտակարանն եւ նախկին Եկեղեցւոյ պատմութիւնը կը վկայեն որ քահանայի գլխաւոր պաշտօնն է Ս. Աւետարանի քարոզութիւնն. եւ Հայ. Եկեղեցին Ձեռնադրութեան միջոցին ամենամեծ կարեւորութիւն կը տայ այդ պաշտօնին, եւ Մաշտոցի մէջ նշանակուած ընթերցուածոց, աղօթից եւ արարողութեանց անհամեմատ մեծագոյն մասն կ'ակնարկէ քահանայի այդ առաքելական եւ աւետարանական գործունէութեան :

Չորրորդ՝ Հայ. Եկեղեցին Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատարիմ աւանդապահութեամբ քահանայութեան սուրբ կարգն եւ ընդ նմին շնորհեալ բոլոր քահանայագործութեան իրաւունքներ անջնջելի կը համարի :

Հինգերորդ՝ Հայ. Եկեղեցին կը պահանջէ իւր քահանայներէն՝ Սրբութիւն եւ Իմաստութիւն, որոց չափն ու աստիճանն լիովին գծած է թէ Կոչման արարողութեան եւ թէ բուն Ձեռնադրութեան միջոցին, եւ միայն այս յատկութեանց հիման վերայ մեր Եկեղեցին կը շնորհէ քահանային վերասացեալ առաքելական իշխանութիւններ :

Առատօրէն վարձատրուած կը համարիմք եթէ կարողացանք այս գրութեամբս քահանայական պաշտօնի գըլխաւոր պարագայներ ի վերհանել, եւ թերեւս մեր պատուական եղբարց ոմանց քաջալերել այսու՝ այն անաւոր եւ սուրբ աստիճանի վեհութիւնը տեսնել, զգալ թէ ի՞նչքան անեղ եւ պատասխանատու պաշտօն առած ենք մեր վերայ, այլ սակայն ի՞նչքան անաբժան եւ թերի

կրգտնուիմք այդ սուրբ կոչման մէջ : Մեր նպատակէն դուրս լինելով քահանայի հովուական բաղմադիմի պարտուց մանրամասնութեանց մէջ մտնել՝ միայն Մաշտոցի կարգն քննութեան առինք , եւ չյիշեցինք թէ քահանայն իբրեւ հայր ժողովրդեան ի՛նչ մասնաւոր պարտքեր ունի հանդէպ անհատ հաւատացելոց , նոցա ուրախութեան եւ տրտմութեան , առողջութեան եւ հիւանդութեան միջոցին , հանդէպ հարուստին ու աղքատին , հանդէպ բարեպաշտին ու անառակին , գիտունին եւ սգէտին : Արդարեւ այս ամենը ամբիփուած է Ձեռնադրութեան իրաւանց եւ իշխանութեանց մէջ . սակայն այնքան զիւրին չէ համառօտ կանոնների վերածել զայնս : Այն քահանայն որ Ձեռնադրութեան այս հիմնական պայմաններն լաւ հասկացած է , հովուական մնացեալ պարտաւորութիւններն ինքնիրեն կը տեսնէ եւ կը դասաւորէ :

Թերեւս այս յօդուած խրախոյս լինի մեր աշխարհական եղբարց եւս , որպէս զի տեսնելով քահանայական աստիճանի վսեմութիւնն ինչպէս մեր Եկեղեցին կը մտնէ , աւելի հոգ տանին նորա բարձրացման համար : Տեսանք թէ իւրաքանչիւր քահանայի ձեռնադրութեան պատասխանատուութեան մտճագոյն մասն աշխարհական ժողովրդեան կը պատկանի որ կը վկայէ (քայց աւա՛ղ թէ ինչպէս կը վկայէ) նորա Իմաստութեան եւ Սրբութեան մասին : Մեր ժողովուրդը պէտք է գիտնայ որ ամեն քրիստոնեայ հաւատացեալ նոյնքան շահ եւ պարտաւորութիւն ունի Եկեղեցւոյ տարածման եւ պայծառութեան նկատմամբ որքան որ եւէ քահանայ , եպիսկոպոս կամ կաթողիկոս : Քահանայն մասնաւորապէս ժողովրդին կը պատկանի , եւ ժողովրդի պարտքն է փնտռել ու գտնել ու ձեռնադրել տալ միմիայն այնպիսիներ որք ունին մեր Եկեղեցւոյ պահանջեալ յատկութիւններ : Նորա նուիրական պարտքն է հոգ տանիլ կրթել եւ դաստիարակել այդ սուրբ աստիճանի համար արժանաւոր անձինք , որպէս զի չստիպուին , առ ի չգոյէ լաւագունին , անյարմար եւ անարժան մարդիկ բարձրացնել քահանայութեան :

ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Բ

Թ՛ղիստոքիւն Յիսուսի . — Անուանակոչութիւն Փրոկ-
չիւն . — Յիսուս անուան նշանակութիւնն . — Այդ Անուան
ծագումը . — Անոր յատկութիւնները . — Անոր գորութիւնը .
— Մեր պատրաստութիւնները հանդէպ այդ Անուան .

Թ՛լփատութիւնը՝ Գրիստոսի աշխարհ գալէն երկու
հազար տարիներ առաջ՝ աստուածային Ուխտ մըն էր յաստ-
ուածակոյս կողմանէ՝ որով Աբրահամ կոչուեցաւ Հայր ազ-
գաց եւ հաստատուեցաւ այն խոստումը թէ՛ Յաւիտեանական
Ժառանգը բուն իր կնոջմէն՝ Սարրայէն Մագուժ պիտի առ-
նէր : Աստուած ըսաւ Աբրահամին — «Թ՛լփատեսցի ձեր ա-
մենայն արու , եւ թ՛լփատեսցիք զմարմինն անթ՛լփատութեան
ձերոյ եւ եղիցի նշանակ ուխտին ընդ իս եւ ընդ ձեզ :
Եւ մանուկ ութօրեայ թ՛լփատեսցի ձեր , ամենայն արու
յազգըս ձեր . . . եւ եղիցի ուխտ իմ ի վերայ մարմնոյ ձերոյ
յուխտ յաւիտեանական : Արուն անթ՛լփատ՝ որ ոչ թ՛լփա-
տեսցէ զմարմինն անթ՛լփատութեան իւրոյ յաւուր ութերոր-
դի՝ սատակեսցի անձնն այն՝ յազգէ իւրմէ՝ զի ցրեաց զուխտ
իմ» (Ծննդ. ԺԷ. 10, 15) : Աբրահամ կատարեց աստուածային
այս հրամանն ու թ՛լփատուեցաւ նախ ինքը իննսուն եւ
ինը տարեկան հասակին մէջ , ետքը թ՛լփատեց իր Իսմայէլ
որդին եւ ամէն արու որ կըգտնուէր իր տանը մէջ՝ ծառայ
կամ ընդոծին :

Թ՛լփատութիւնն աստուածագիր օրէնք եղաւ նաեւ Մով-
սէսի փամանակ (Եղ. ԺԲ. 44, Ղևոս. ԺԲ. 3) եւ այն՝ որ չ'էր
թ՛լփատուեր՝ պիղծ կըհամարուէր : Հրեաներուն համար մեծ
անարգանք մըն էր անթ՛լփատ կոչուիլը :

Արդ՝ Գրիստոս աշխարհ եկաւ՝ ո՛չ թէ օրէնքները լուծե-
լու , այլ՝ լրացնելու , վասն զի Ինքն ի՛նչ էր բոլոր օ-
րէնքներուն յրումը՝ «որ զամենայն յամենայնի լնու»
(Եփես. Ա. 23), ուստի իր հրաշալի Մննդենէն ութ օր ետքը,
Իսրայէլի մանուկներուն պէս եւ Ինքը , օրինաց համա-

ձայն, թլփատուեցաւ՝ Իր Անձին վրայ ցոյց տալով Օրինաց հնազանդութեան անհրաժեշտ պարտականութիւնը: Եւ որովհետեւ թլփատութիւնը ուխտ մըն էր Աստուծոյ ու մարդկան միջեւ, աստուածային Մանուկը, Աբրահամին խոստացուած Յաւիտենական բուն այդ ժառանգը՝ որ Խաչի անարգ մահուամբ Իր Կենդանարար արիւնը թափելով մարդկային ազգը փրկելու համար միայն աշխարհ եկած էր, Իր թլփատութեան արիւնին առաջին Կաթիլները Ուխտ եւ գրաւական ներկայացուց Հօր Աստուծոյ ի նշան հաշտութեան՝ իբրեւ Քահանայապետ՝ որ «Բուռն եհար զգաւակէն Աբրահամու եւ պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել, զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ Քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն» (Եբր. Բ. 17):

Աստուածային պատգամ էր որ «առանց հեղման արեան չլինէր թողութիւն» (Եբր. Թ. 22) հետեւաբար եւ փրկութիւն, ուստի նորածին Սուրբ Մանուկը՝ ցոյց տալու համար թէ՛ Ինքն է մարդկութեան տիեզերական Փրկիչը՝ որ, ինչպէս «այր կատարեալ ի չափ հասակի,» Իր բովանդակ արիւնը պիտի թափէ մարդկային մեղաց քաւութեան համար անարգ փայտի մը վրայ՝ մահուամբ Խաչի՝ ի լրումն արդարութեան, նոյնպէս եւ թլփատութեան օրէնքին ներքեւ Իր մանկական արեան առաջին եւ Սուրբ կաթիլները կը թափէ՛ ի լրումն աստուածային հին Ուխտին՝ իբրեւ ժառանգ յաւիտենական, եւ ահա՛, այս արեան արդար իրաւունքովն է որ՝ Աստուծոյ Որդին՝ ծնեալն իմմանուէլ՝ անուանեցաւ Յիսուս՝ որ է Փրկիչ, ու ջնջելով թլփատութեան անարգութիւնը՝ թողուց մեզ փոխանակ սրտի սուրբ ու ճշմարիտ թլփատութիւնը՝ որ է կատարեալ հնազանդութիւն առ Աստուած եւ ընդունելութիւն Աւետարանի ճշմարտութեան Անոր պատուէրները կատարելով:

Յիսուս (Եէհօշուս) երբայական Անուն է՝ որ, ինչպէս ըսինք, կը թարգմանուի Փրկիչ:

Այսպէս՝ թարգմանեցին մեր Երանաշնորհ Սուրբ Թարգմանիչք որոշելու համար Յիսուս անունը երկու Յիսուսներէն որ կ'երեւնան Ս.Գրոց մէջ՝ երկուքն ալ սուրբ մարդիկ եւ Փրկիչ ժողովրդեան. մին՝ Որդին Նաւեայ՝ որ այս անունով կոչուեցաւ՝ որովհետեւ յաջորդ եղաւ Մովսէսի. առաջնորդեց ժողովրդեան իբրեւ զօրավար եւ Աւետեաց Երկիրն իր իշխանութեան ներքեւ առաւ, դասեց Իսրայէլեան ազգը եւ

ճշմարիտ հաւատքով որ հաւատարմութեամբ ծառայեց Եհովային եւ այսպէս եղաւ պատկեր իմն Մեծ Զօրավարին երկնային զօրաց եւ Գերագոյն առաջնորդին մարդկութեան յամենաբարին եւ յամենակատարեալն . իսկ միւսը՝ Յովսեփեկի որդին՝ Յիսուս՝ որ Գահնայայպետ էր Հրէից՝ Գերութենէ դարձի ժամանակ , եւ , աշխատելով Տաճարի շինութեանն ու աստուածային պաշտամանց վերահաստատութեանը , պատկեր հանդիսացաւ ճշմարիտ Փրկչին :

Այս երկու Յիսուսներէն եւ ո՛չ մին սակայն Փրկիչ անուան ամբապինդ ու լայնատարած նշանակութիւնն ունեցաւ , վասն զի՝ թէպէտ երկուքն ալ առաջնորդեցին ժողովրդեան եւ իւրայլեան ազգի փրկիչ կոչուեցան , սակայն երբէք չի կրցան իրենց ժողովրդեան մեղքերը քաւել , մինչդեռ Յիսուս՝ Հօր Աստուծոյ միածին Որդին՝ քաւիչն եղաւ մարդկային մեղաց եւ միշտ կ'առաջնորդէ բոլոր հաւատացեալներուն զէպ ի Երկիրն Աւետեաց՝ ի վերելս յաւիտեան երջանկութեան :

Մարդիկ չէի՛ն որ Յիսուս անունը դրին նորածին այս Մանկան վրայ . Մարգարէները դարերէ առաջ գուշակեցին զայն եւ Երկինք յայտարարեցին : Ինքն Աստուած էր Հեղինակը երկրպագելի Անուանն Յիսուսի եւ Աստուած միայն կարող էր տալ այս Անունը , զի Ինքը միայն հեղինակութիւն ունէր իր միածին Որդւոյն աստուածային անձին վրայ եւ , ինչպէս կ'ըսէ Որդիւնէս , «բա՛ց ի Երկնաւոր Հօրմէն՝ այս աստուածային Որդւոյն կատարելութիւններն ու Պաշտօնի բարձրութիւնն ո՞վ ի մարդկանէ կարող էր ճանչել եւ ո՞վ կարող էր գիտնալ այն երկնահարաշնչապատակը՝ որուն կատարմանը համար աշխարհ խրկած էր իր Բանն ու միածին Որդին» : Մեծն Գաբրիէլ երկինքի լուսափայլ շքեղութեանց մէջէն աշխարհ բերաւ այս պաշտելի Անունը եւ յայտնեց ՄարիամՍ. Կոյսին ըսելով — «հա՛յ յղա՛ջիբ եւ ծնցես որդի , եւ կոչեսցես զանունն նորա Յիսուս» (Լու. Ա. 31), յայտնեց Յովսեփին՝ թէ Մարիամ «ծնցի որդի եւ կոչեսցես զանունն նորա Յիսուս . զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց (Մատ. Ա. 21), յայտնեց նաեւ խեղճ եւ անմեղ Հովիւներուն՝ աւետարանելով այն մեծ ուրախութիւնը՝ թէ ծնաւ աշխարհի Փրկիչ՝ «որ է օծեալ Տէր՝ ի քաղաքին Դաւթի» (Լուկ. Բ. 11) :

Ուրեմն Յիսուս անունն , իր բովանդակ նշանակութեամբ , միա՛կ , սուրբ եւ յատկեղ անունն է Փրկչին ճշմարտի եւ

Քրիստոսին Աստուծոյ :

Բայց մի՞թէ այս անունը կրնա՞յ բովանդակել Իր մէջ Օձեւոյն Աստուծոյ բոլոր կատարելութիւնները, — անտարակոյս, ո՛չ : Աստուածորդւոյն անձը անսահման է իր կատարելութեանց մէջ, հետեւաբար միա՛յն մէկ անունով անկարելի՛ է բացատրել : Ս. Գիրք բազմաթիւ անուններ կուտան Փրկչին՝ որ աշխարհ պիտի գար : Եսայի վեց անուններով կը փառաւորէ ծնեալ Փրկիչը՝ իր մարգարէութեանց մէջ, կ'անուանէ զայն՝ «Սփանջելի, Խորհրդակից, Աստուած, Հօր, Իշխան, Հայր հանդերձեղոյ աշխարհին» (Ես. Թ. 6) եւ արդա՛րեւ՝ Սքանչելի է՝ Իր ծննդեան մէջ, Խորհրդակից՝ Իր երկնային քարոզութեանց մէջ, Աստուած՝ Իր գործերուն մէջ, Հօր՝ Իր մարդկային չարչարանաց մէջ, Իշխան՝ յաւիտենական երջանկութեան մէջ եւ է Հայր հանդերձեւոյ աշխարհի՛ Իր Ինքնազօր Յարութեան մէջ, եւ սակայն չի կայ անուն մը՝ ա՛յնքան պաշտելի, ա՛յնքան գերագոյն ա՛յնքան աստուածային՝ առաւել քան զանունն Յիսուս՝ վասն զի այս անուան եւեթ «ամենայն ծուր կրկնեսցի՝ երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամտականաց եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէ՛ր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» (Փիլիպ, Բ. 10, 11) : Որդին Աստուծոյ՝ Իր գերագոյն աստուածութիւնը յայտնող միւս բազմաթիւ անուններէն աւելի՛ Յիսուս անունը՝ զոր, մարդկային ազգի փրկութեան համար, Իր կրած ամենամեծ աշխատութեանց ու մարդկային անտանելի չարչարանաց արդար իրաւունքովը եւեթ Իր վրայ առաւ : Յիսուս, միակ անունն աստուածային՝ որ կը բարձրացնէ ամէնէն Բարձրագոյն անուններն իսկ : Ո՛վ որ կ'արտասանէ այս անբացատրելի անունը կ'արտասանէ ի՛սկ եւ իսկ զամենակարողն Աստուած՝ որ մարդացաւ, աղքատացաւ, նախատուեցաւ, ունայնացաւ, հալածուեցաւ, խաչուեցաւ, զոհուեցաւ, մեռաւ եւ յարեաւ մարդկային ազգի համար, հետեւաբար Յիսուս ըսելով՝ կը յայտնէ աստուածային անհասանելի Խորհրդոց բովանդակութեանը եւ այն անպատում գործերը՝ զոր ըրաւ երկրի վրայ աշխարհի Փրկիչը՝ զմարդն աստուածացնելու եւ Հօր Աստուծոյ որդեգրելու համար : Յիսուս անունը նուիրագործուեցաւ ի յաւիտենից, կերպաւորեցաւ հին Օրինաց մէջ, փափաքելի եղաւ Նահապետներուն, գուշակուեցաւ Մարգարէներէն, սահմանուեցաւ յաստուածակոյս կողմանէ, աւետարանուեցաւ հրեշտակէն

եւ յոյսն ու մխիթարութիւնը , փառքն ու յարութիւնը եղաւ անկեալ ու մեռեալ մարդկութեան : Առաքեալներն ընդհանուր աշխարհի հոչակեցին այս անունը . անթիւ Սուրբեր զայն եւեթ խոստովանեցան . մարտիրոսներ այս անուան համար թափեցին իրենց արիւնը , ամէն հաւատացեալ բերկրութիւն կրողայ այս անունէն . սուրբեր զայն կրփառաւորեն եւ ընդհանուր աշխարհ այնմ կ'երկրպագէ :

Մեծ եւ ահաւոր է Յիսուս անուան զօրութիւնը : Խստապարանոց ու սրտով անթլփատ Հրեաներ՝ սարսուռ կըղգային ի լուր այս անուան՝ որով մեծամեծ սքանչելիքներ տեղի կ'ունենային : Առաքեալներն ուրիշ բան չի խնդրեցին իրենց ազօթքին մէջ եթէ ո՛չ յանուն Յիսուսի համարձակութիւն ունենալ քարոզելու Աւետարանի ճշմարտութիւնը եւ , յանուն Յիսուսի , մեռեալներն յարուցանել , հիւանդները բժշկել , անգամալուծները յոտին կանգնեցնել : Երբ Յիսուս անունն ելաւ իրենց բերնէն՝ «չարժեցաւ տեղին յորում էին ժողովեալ» (Գործ. Գ. 31) : Յիսուս անունը՝ ուրախութիւնն է հրեշտակաց ու սարսափն է զիւաց , մխիթարութիւնն է տրամեալներուն եւ երջանկութիւն անոնց՝ որ կըհաւատան . անուն մը՝ որ Բարձրութեանց ծայրերուն հետ՝ յետին խորոց յատակները եւ աստուածութեան հետ մարդկութիւնը Իր մէջ կը բովանդակէ :

Որչա՛փ ուրեմն պաշտելի ու երկրպագելի է այս անունը՝ «անունն սքանչելի յամենայն երկրի» (Մատթ. Ը 10) , «անունն սուրբ եւ ահեղ» (Մատթ. ՃԺ. 10) : Սփանջելի՛ , վասն զի Աստուած է , Սու՛րբ , վասն զի մա՛րդ է՝ առա՛նց մեղաց , անե՛ղ՝ վասն զի հակառակ է անոնց՝ որ հակառակ են ուղղութեան եւ ճշմարտութեան : Ո՛չ ապաքէն Յիսուս անուն երբ որոտաց Երկինքէն՝ խստաշունչն Սօզոս դարձաւ ի Պօղոս՝ յառաքելութիւն այն անուան՝ զոր անողքաբար կը հալածէր : Ահե՛ղ է եւ Դժոխոց՝ որուն սարսափն ու ահաբեկութիւնը եղաւ՝ երբ անոր Դո՛ւները խորտակեց , անե՛ղ է եւ Սրբոց՝ որոնց չարչարանքներն ա՛յնքան սաստկացան՝ որքան Յիսուս անունը բորբոքեցաւ իրենց սրտերուն մէջ . անե՛ղ է նոյն իսկ Յիսուսի Որուն ա՛յնքան ցաւ , վիշտ ու տանջանք պատճառեց , Որուն ճաշակել տուաւ դառնութեան մահը . անմեղ էր Նա , եւ Իր դատապարտութիւնը ուրիշ բան չէ՛ր եթէ ո՛չ վասն զի Յիսուս էր : Դարձուցէ՛ք աչքերնիդ դէպի խաչափայտը , ու հո՛ն պիտի տեսնէ՛ք այս դատապարտութիւնը՝ դրոշմուած գլխուն վրայ՝

«Յիսուս» :

Այս մակագրութիւնը՝ իբրև նշաւակութիւն խաչափայտին գազաթը դրոշմուած՝ Փրկչին գլխուն վերև , փառաց ու մարդասիրութեան պսակն էր սակայն Խաչեցելոյն , պսակ՝ որ հին Օրինաց մէջ ալ կ'երեւնար քահանայապետին ճակտին վրայ ոսկի տառերով , երբ կըմտնէր ի Սրբութիւն՝ արեան զոհը մատուցանելու ի քաւութիւն մեղաց : Նոյն պսակը՝ պէտք էր որ Յիսուս ալ կրէր իր գլխուն վրայ իբրև Քահանայապետ յաւիտենից , հարկ էր որ Խաչին վրայ՝ իր աստուածային անձին փրկարար արեան զոհը մատուցած ատեն՝ իր փրկչական գլխուն վրայ փողփողէր իր անունը , անունը Բարձրելոյ , անուն թաղաւորաց թագաւորին , անուն տիեզերաց միահեծան Տեառն եւ Արարչին , անուն , վեջապէս , «որ ի վեր է քան զամենայն անուն» (Փիլիպ. Բ, 9) :

Արդ՝ որքան մեծ ու վսեմ է Յիսուս անունը՝ ա՛յնքան մեծ ու վսեմ են մեր պարտականութիւններն հանդէպ այդ անունան , եւ , ո՛րքան Յիսուս իր աստուածային գերագոյն բարձրութիւններէն խոնարհեցաւ մինչեւ մարդկային նուաստագոյն աստիճանները՝ մի՛ միայն առ սէր մարդկութեան՝ ա՛յնքան մենք ալ մեր մարդկութեան ստորին աստիճաններէն պարտաւոր եմք բարձրանալ առ Ինքն՝ մեր Յիսուսատիպ գործերով՝ առ սէր աստուածութեան : Ըլլալ «այդ կատարեալ ի չափ նասակի լրման Քրիստոսի» (Եփես. Գ, 13) մարդկային այն բարոյականն է՝ զոր ինքն Յիսուս իր գործերովը ցոյց տուաւ : Անկարօտ Փրկիչը , ցորքան կա՛յ ու կը մնայ աշխարհ եւ ցո՛րքան Յիսուս անունը կըհնչեն քրիստոնեայ բերաններ՝ կը կարօտի ամէն մարդասիրական գործերու՝ զոր պարտաւոր եմք կատարել : Քաղցեալներու սրտերուն մէջ Յիսուս՝ կարօ՛տն է պատառիկ մը հացին , աղքատներու սրտերուն մէջ՝ կարօ՛տն է ձեռնտուութեան , սգաւորներու համար՝ կարօ՛տն է մի իթարութեան , սրբոց եւ այրեաց համար՝ կարօ՛տն է հայրական հոգածու խնամքներու եւ իր այս անչափ եւ անհուն կարօտը միշտ իր աստուածային ձայնովը կ՛իմացնէ մեզ՝ երգմամբ հաստատելով թէ՛ ինքը կարօ՛տն է այն ամէնուն՝ որոնց մարդիկ կըկարօտին , — «ամէն ասեմ ձեզ , որովհետեւ արարէք միւսմ յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք» (Մատ. ԻԵ, 40) : Յիսուսի նմանող ըլլալ եւ հանդէպ այդ պաշտելի անունան մեր պարտականութիւնները , իբրև աւետարանի բարոյականու-

Թեան մարդ, կատարել՝ ուրիշ բան չէ եթէ ո՛չ չի խնդրել անձին օգուտը՝ «այլ զբազմաց զի ապրեսցին» (Ա. Կոր. Ժ. 33): Պատիւը միայն՝ զոր հանապազ կ'ընծայեմք միածին Որդւոյն պաշտելի անուան, երբէք չէ՛ կարող լրումն տալ մեր քրիստոնէական պարտականութեանց: Իսրայէլի Աստուածը՝ այն ա՛նաւոր Եհովան՝ նախանձու եւ վրէժխնդրութեան Աստուածն էր, իր փառքն՝ ու պատիւը չէ՛ր տար ուրիշին. — «Եթէ Տէր իմ ես — կ'որոտար երկինքէն — ու՛ր է պատիւն իմ, եւ եթէ Հայր իմ ու՛ր է փառքն իմ» (Մաղ. Ա. 6). նոյն Աստուածը Քրիստոնէութեան Յիսուսն է, Սիրոյ ու Գթութեան այն ամենապատուական Չոհն ու Պատարագը՝ որ Իր փրկական անուան Պատիւն ու Տիրական փառքը Սիրոյ եւ միմիայն Սիրոյ մէջ կը փնտոէ: Իր աստուածային արտասո՛աց ամէն մէկ կաթիլը, Իր Փրկական արեան ամէն մէկ շիթը Սիրոյ համար կըթափուին ու Սէր միայն կը խնդրէ իր սիրելիներէն, Սէր՝ ինչպէս որ Ինքը սիրեց զմեզ... անձին զոհողութեամբ: Ամբողջ աւետարանը Սիրոյ համար կըբանայ, ու Հինը Նորի փոխելով՝ Նոր Պատուիրան կ'անուանէ Սէրը — «Պատուիրանն նո՛ր տամ ձեզ զի սիրեսցիք զմիմեանս» (Յով. ԺԳ. 13), Նո՛ր Պատուիրան՝ որով կը զբացնէ իր սիրելի աշակերտներուն թէ — ձեր գիտութիւնը, ձեր հրաշքները, ձեր առաքելութիւնը, ձեր սրբութիւնը թէպէտ զաշխարհ քրիստոնէութեան լուսով պիտի լուսաւորեն՝ սակայն ձեր «զմիմեանս սիրել» — ը մի՛ակ ապացոյցը պիտի ըլլայ, անվիճելի, ճշգրիտ ու փայլուն ապացոյց թէ՛ արդարեւ իմ անունս կըպատուէք՝ վասն զի հանդէպ իմ անուանս Սէրն է միայն ձեր պարտականութիւնը — «յա՛յսմ ծանիցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Յով. ԺԳ. 14, 15): Եւ արդարեւ ո՛չ առաքելական քարոզութիւնք, ո՛չ մարտիրոսութիւնք, ո՛չ ազատութիւն եւ ո՛չ համարձակութիւն յանդիման երկրի թագաւորներուն՝ ո՛չ այնքան զարհուրեցուցին հեթանոսութիւնը՝ որքան քրիստոնէական սիրոյ միութիւնը անարեկեց զայն ու կ'անարեկէ ցայս վայր:

Մենք՝ որ կը հաւատամք թէ՛ Յիսուս՝ Աստուած է, պէտք է հաւատամք նաեւ թէ՛ Սէրը՝ Յիսուս է. վասն զի Յիսուս՝ Փրկիչ է, եւ փրկութիւնը՝ Սիրոյ մէջն է՝ որուն մենք՝ Հայերս մանաւանդ, աւելի պէտք ունիմք. եւ միթէ հա՞րկ է երկար բացատրութեանց մտնել այս ճշմարտութիւնը ա-

պացուցանելու համար . . . — կատարե՛նք մեր պարտականութիւններ հանդէպ անուանն Յիսուսի, եկեղեցական թէ աշխարհիկ, քաղաքացի թէ գիւղացի, տէր կամ ծառայ, մեծ ու պզտիկ, գիտուն ու անգիտ, հարուստ ու աղքատ, այր ու կին, ծեր ու սղայ, վերջապէս ի՛նչ որ եմք, հետեւեմք Սիրոյ այս աստուածային Ձայնին, զի փրկութիւն է Սէրը, սիրե՛նք մէկգմէկ . . . ո՛հ, որպէս զի մեր Փրկչի սիրոյն արժանանամք :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌՈՒՄԱՆԻԱՅԷՆ

Արժանաշնորհ Տէր Եղբայր ի Քրիստոս,

Ձեր Ս. Եղբայրութեան՝ Աւգոստոս Յ թուակիր գրութիւնն դեռ չ'ստացած, մտադիր էի Ձեզ գրել. թէ Ձեր պատուականութեան ամսաթերթերն՝ զորս կը հրատարակէք, ախորժանօք կ'ընթեռնու՞մք եւ ուրախ եմք. եւ հասարակաց քովն ալ գովանի հանգամանքները կը պատմենք խրախոյս տալու համար :

Բայց անձնական տկարութենէս զատ՝ ժամանակիս տագնապներն . . . շուարեցուցին զիս, անոր համար չկրցայ գրիչ ի ձեռն առնուլ . . . Աստուած՝ վերջն բարի ընէ :

Շատ լաւ կընէք քարոզներդ գրելով կրհրատարակէք : Եթէ բոլոր քարոզներդ, կացրդական հանգէներու մէջ ըրած ատենաբանութիւններդ ժողովես, յընթացս կենացդ հետզհետէ հատորներ կ'ըլլան : Երանի՛ էր թէ մեր հին եւ նոր բեմբասացներն եւս զիւրեանցսն ի գիր առնուին. ո՛րչափ պատմական, աստուածաբանական, ազգային աւանդութիւններ, եւ ուրիշ խորհրդաւոր բացատրութիւններ կը մնային մեզ. այս օրուան օրս ամենն ալ յօգս ցնդեցան եւ անյայտացան : Ոսկերեանիներն եւ այլոցն՝ գրելով մնացած են : Ներեցէք, եղբայրական համարձակութեամբ կրխօսիմ զասոնք, ոչ թէ խրատուութեամբ :

Ընդդէմ թշնամեաց Հայկական Եկեղեցւոյս հղօր ախոյեան կրտեսնամ Ձեզի ի պաշտպանութիւնսդ, Ներսիսի Շնորհալուոյ նման՝ անուշիկ եւ քաղցրութեամբ կը յաղթա-

հարէք ի վերայ յարձակողները :

Տասը — տասնուհինգ տարի յառաջ Արարատ լրագրոյն մէջ յայտարարութիւն մի կարդացի եւ շատ զարմացայ . իբր թէ Գալլիացի ոմն ի հին արձանագրութեանց Հռովմայ եւ այլուստ ստուգելով հաստատեր է թէ Քրիստոսի Տեառն մերոյ Ս. Մնուհդը ճիշտ Դեկտեմբեր 25ին հանդեպեր է : Խմբագիրն Արարատայ զայս բառ առ բառ թարգմանելով կըզնէ առանց ծանօթութիւն տալու ի ստորեւ : Եթէ չպիտի կարենար պաշտպանել իւր Եկեղեցին , ի՞նչ հարկ կար Հայոց ազգին ծանուցանել . միթէ՞ գրելու ուրիշ բան չկար : Ի գուպարայազթ մրցարան դիմադրաւ շահատակող ըմբիշն պէտք է որ միշտ զինքն անընկճելի կացուցանէ , եւ զոսոխն յորսայս զգեանել : Ոչինչ ընդ հատ է ի սմանէ եւ ասելն Գեր . Եղիշէ Սրբազանին Դուրեան , Պատ . Հայ . Մատենագրութեան , երես 89 . թէ 1700 թուականին Պօլսոյ մէջ ընդդէմ «ուղղափառաց» (կաթողիկոսաց) հալածում տեղի կ'ունենար (ի մերայնոց) . չարափառութիւնը մեզի կը մնայ . եւ յանիրուի զրկած կըլինեմք : Փոխանակ պաշտպանելու իր ազգային դատը , իր Եկեղեցին հիմնայատակ կը կործանէ : (*)

Յունիս ամսաթերթիդ մէջ , եւ այլուր կը տեսնանք , թէ Աստուածաշունչն նորոգ տպագրութեամբ հրատակուի ի Ս. Էջմիածին : Այնչափ ահագին պատրաստութիւններ եւ ծախքեր ի զուր կը համարիմ ես , մէկ օրինակէն միայն լինելուն համար . թէեւ ընտիր , բայց ոչ Սահակայ եւ Մեսրոպայ գրչութիւնն է , եւ ոչ ի յաջորդաց նոցին անմիջապէս գաղափարեալ : Լաւագոյն լինէր ըստ իս , եթէ Բագրատունւոյն եւ Զօհրապեան օրինակները քովերին առնէին , եւ բոլոր ձեռագիրները աչքէ անցունելով , քննութեամբ տպագրէին . ամեն ընտիր օրինակ մը կ'ըլլար յայնժամ . եւ կաթողիկոսարանի համար դժուարութիւն ալ չկար : Որովհետեւ ի հրամայել Ն. Ս. Օծութեան իսկոյն արժանաւոր քննիչներ կըհաւաքուին թէ ի կրօնաւորական կարգէ , եւ թէ յաշխարհական :

(*) Այսինքն , ասել կուզէ մեր Արժանապատիւ Թղթակիցն , Հռովմէական կաթողիկոսներն՝ «ուղղափառ» կոչելով՝ զօրութեամբ կամ լռելեայն զմեզ չարափառ կըկացուցանէ : Գեր . Եղիշէ Սրբազանի յիշեալ գրուածն մեր առաջն շունենալով՝ չենք կարող խնդրել լաւ ըմբռնել : Բայց կըթուի որ մի շահերտի պակասութեան կամ տըպագրական վրեպակի արդիւնք է յիշեալ թերութիւնն :

Ղ եւ Լ տառից համար աւելորդ կը համարիմ խօսել . վասնզի ընդարձակ քերականութիւններ բաւական խօսած են . կիրառութիւնն ալ խափանելը ըստ իս պատկանաւոր չէ այնչափ . որովհետեւ ամենահին ձեռագիրները կը գործածեն , անշուշտ պէտքը զգալով : Արդի հետաքննին խողարկութիւնները հին ձեռագիրներու մէջ՝ նայինք ի՞նչ լոյսեր պիտի սփռեն յապագային , միայն ուղիղ ընթերցումը ուսուցանելու է հասարակութեան , որ այնպէս ծանրալուր չհնչին այն փափկաձայն բառերը կամ անունները : Եթէ օտար ազգաց ամէն բառերը իրենց ձայնին եւ հնչմանը յարմարցնենք այն ժամանակ Յովսէփը , Յակոբը Եօսեֆ կամ Եսփօք գրենք ու կարգանք եւն . եւն . յայտնի է Ձեզի որ իւրաքանչիւր ազգի լեզու յատկութիւն մը ունի . եւ ի փոխառութեան յայլոց ազգաց , իրենց սովորութեանը յարմարցնել կը ջանան :

Աւ երկբարբառը Օ ի փոխելն ալ այնչափ հաճոյ չթուիր ինծի : Նախնիք մեր ի սկզբան գրականութեան աչքի առջեւ ունէին Յունաց Օ տառը , բայց ոչ փոխառութիւն ըրին , եւ ոչ ալ ուրիշ գիր մը հնարեցին , անշուշտ զանազանութիւն եւ կամ տարբերութիւն կը տեսնային Աւ եւ Օ ձայնաւորաց մէջ : Մեծամեծ քերթողք այս մասին ալ բաւական գրած են , ուստի ես բաղմահմուտ Բագրատունւոյն կողմն կ'անցնիմ , որ կըսէ «բանասիրաց տաղկալի է Օ գիրը նախնեաց գրականութեան մէջէն բոլորովին վերցնել , եւ Աւ հաստատել : » Միայն թէ աշակերտներուն սորվեցնելու է որտեղ Աւ պիտի կարգան , ո՛րտեղ Օ :

Նախնիք՝ յատուկ անուանց մէջ Յունաց օմէկային դիմացը գրին Ով : Ո ին ձայնը երկնցնելու համար Վ ը գրին . բայց արտաբերութեան ժամանակ առանց Վ ին ձայնը հանելու կարդալու է :

Վերջապէս Աւգոստոս Յ թուակիր պատուական նամակիդ կըպատասխանեմ , թէ մենք ասկէ ետքը դադրած եմք մտաւորական աշխատութենէ , թէ հիւանդութիւն եւ թէ ծերութիւն ծանրացած են վրաս , ցնդածի պէս եղած իմ , եւ չեմ կրնար բան մը գրել , 30-40 տարի յառաջ ըլլալու էր որ քիչ շատ բան մը գրել կարողանայի , 2-3 ամիսէ ի վեր ասոնք գրել տալու կ'աշխատիմ . մեր առջի գրութիւններէն օրինակել տուի . ուղղագրութեան եւ կետագրութեանց մասին վստահ չեմ , թերեւս ուրեք ուրեք սխալած են . ես ընդհանրապէս գրաբար կը գրէի , եթէ ասոնց մէջէն Ձեզի յարմար բան մը գտնաք

հատուած հատուած կրնաք հրատարակել: (*)

Ուստի նոր ի նորոյ բան մը չգրելուս համար ներողութիւն խնդրելով,

27 Հոկտեմբեր 1900 տ .

Մնամ աղօթակից,

ԿԱՐԱՊԵՏ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՊՅՅԱՀԵԱՆ

(*) Մեր Արժ. Թղթակիցն եկեղեցական պաշտամանց և արաբողութեանց բարեկարգութեան վերայ մի կարգ պիտանի յօդուածներ զրկած է մեզ, զոր պիտի հրատարակենք հետզհետէ:

Ծ. Խ .

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍ ՏԱՆԷՆ

Սրբակրօն Տէր .

Ստացեալ եմ զնամակ Ձեր թուագրեալ յՅ1 Օգոստոս ամսոյ, եւ ընդ նմին նաեւ զքանի մի թերթս « Հայ. Եկեղեցի » կրօնական հրատարակութեան Ձերոյ, ընդ որ գոն եմ յոյժ :

Որչափ ուրախ եմ ի տեսանել զի հոգեւորական ոք ազգի մերոյ աշխատի յայսպիսի հոգեւոր պարագմունս՝ ուսուցանելով ժողովրդեան զկրօն իւրեանց, եւ սէր առ Եկեղեցի, այնչափ եւ տխուր եմ զի Դուք եւս հակամիտեալ էք ի գործածութիւն Տաճկահայ աշխարհաբառ լեզուի որ զինչ եւ իցէ, չէ սակայն եկեղեցական լեզու մեր, եւ կարծելոց էր ոք թէ գոնէ այսպիսի հրատարակութիւն մի ընտրելոց էր զեկեղեցական լեզու մեր, այսինքն զպարզ գրաբառն: Եւ եթէ ասիցէք՝ քաղմաց անհասկանալի լինի, այդու եւս յաւետ առաւելու հարկաւորութիւն մշակելոյ զայն, քանզի եթէ ժողովուրդն չհասկանայ զգեղեցիկ աղօթան եւ զպաշտամունս Սուրբ Եկեղեցւոյ, զիս՞րդ կարէ գգալ ջերմեռանդութիւն կամ սիրել զայն:

Ողջունիւ յարգանաց, Մնամ, Ձեր խոնարհ ծառայ, Կալկաթա, 27 Նոյեմբեր 1900. Յ. Գ. ԱԲԳԱՐ

Մեր Արգոյ Թղթակիցն զմեզ ամօթահար կ'առնէ իւր իրաւացի դիտողութեամբ: Կրօնաթերթիս մէջ անցեալ տարի երկարօրէն բացատրուեցաւ գրաբառ լեզուի ուսման անհրաժեշտութիւնն կրօնական տեսակէտով:

Արդարեւ ցաւալի և յոյժ ցաւալի երեւոյթ մի է որ մեր «ժողովուրդն չհասկանայ զգեղեցիկ աղօթան և զպաշտամունս Ս. Եկեղեցւոյ», առանց որոյ բնականաբար չկարէ «զգալ ջերմեռանդութիւն կամ

սերել զայն: Բայց որքան ժամանակ ժողովուրդն (այսինքն, մեր ընթերցողաց մեծամասնութիւնն) գրարառ չհասկանայ, կրվախնանք որ մեր գրաբառ (նոյն իսկ պարզ գրաբառ) գրուած յօդուածներ ևս նոյնպէս չկարգան, կամ ստիպուին դնել ի շարս չհասկացած աղօթից և արարողութեանց: Արդէն բաւական արտունջ կըլայտնեն ոմանք՝ փոքր ինչ գրաբառախառն գրուածոց դէմ: Բայց այսու ամենայնիւ Պարոն Աբգարի առաջարկութիւն միշտ աչքի առաջեւ ունիմք, եւ պիտի աշխատիմք օր ըստ օրէ մեր ժողովրդեան աւելի գիւրամատչելի կացուցանել թէ մեր եկեղեցական լեզուն և թէ մեր եկեղեցւոյ աղօթներ և արարողութիւններ՝ յաճախ մեկնելով և բացատրելով զայնս: Ծ. Խ.

ՆԱՄԱԿ ԶԱՒԱՅԷՆ

Արժանայարգ Տէր,

Ձեր Հայ. եկեղեցի պատուական հրատարակութեան համարներն զոր հաճաք էիք յղել ինձ՝ ստացեալ եմ չնորհակալութեամբ, կարգում եմ խորին հետաքրքրութեամբ եւ մեծ հաճոյքով: Այս հեռուոր անկիւնում, առանց եկեղեցւոյ եւ քահանայի, Ձեր կրօնաթերթի ընթերցումն մի յատուկ հոգեւոր հաճոյք է ազդում սրտի վերայ, որով գոզվիր մտօք եւ մարմնով զառնում է մարդ ի մանկութեան օրերն, այդ քաղցր եւ անմեղութեան անդառնալի՝ օրերն:


Յարգանաց եւ համակրանաց հաւաստեօք,
Սուրբայիս 12 Դեկտեմբեր 1900 Ձեր խոնարհ ծառայ,
Յ. Տէր Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ՄԱԼԱՅԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԷՆ

Արժանապատիւ Հայր,

Քաղցր է ինձ Ձեզ հաղորդել մեր անհուն չնորհակալութիւնքն որ առ մեզ յիշած էիք Ձեր պատուական ազգագուտ «Հայ. - եկեղեցի» ամսաթերթն ուղարկելով: Յիբաւի ջերմեռանդ հոգևով կրկարգամք ամեն անգամ այն ամեն թիւերն որք Ձեր բարեչնորհ կրօնական եւ աստուածաբանական լի հոգևով գրուած են, եւ անտարակոյս լոյս պիտի գտանին Ձեր անխոնջ աշխատութիւնքն այն սրտերուն մէջ որոնք ծարաւի եւ կարօտ մնացած էին մի չնորհքով հոգեւորական թերթ կարգալոյ:

Միակարուր 24 Դեկտեմբեր 1900 Մնամ յարգանքօք
ԱՆՆԱ. Ղ. ՄԱՏՈՒՐԵԱՆ





Մանկեքրի եւ շրջակայից Պասուական Ազգայնոցդ կը ծանուցանեմ, որ մեր Եկեղեցոյ Սրբազնագոյն Հայրապետէն երկու կարեւոր Կոնդակներ եկած են, որոց մին ընդհանուր Ազգին ողորտայ է, եւ միւսն մասնաւորապէս սեղոյս Գաղթականութեան կը պատկանի: Այս Կոնդակներ պիտի կարդացուին սեղոյս Ս. Եկեղեցոյ Բեմէն յառաջիկայ Կիրակի, ի 10 Մարտի, Ս. Պասարագի միջոցին:

Այս առթիւ կը ծանուցանեմ միակաւսեայն Պասուական Ժողովրդեանդ, որ ներկայ Մեծի Պահոց միջոցին առատեան եւ Արեւագայի Ժամերգութիւն կը կատարուի ամեն Զորեջաքքի եւ Ուրբաթ օրեր առատեան 10 ժամուսն. իսկ երեկոյեան (Խաղաղական) Աղօթք ժամ 6.30ին կը կատարուի:

Մանկեքր 4 Մարտ 1901. Թ. ՔԼ. Տ. Ի:

